

ՄԵՐ
ԸՆԹԵՐՑՈՂՆԵՐՈՒՆ

Ս. Չառկուան տօնին եւ
Եղեռնի 85ամեակին առիթ-
ներով, «Ազգակ» լոյս չի
տեսներ Երկուշաբթի 24 եւ
Երեքշաբթի 25 Ապրիլին:
Մեր յաջորդ թիւը՝ Չորեք-
շաբթի, 26 Ապրիլին:

ԱԶԳԱԿ

AZTAG QUOTIDIEN POLITIQUE ET LITTÉRAIRE

1500 Լ.Ո. 73րդ. ՏԱՐԻ, ԹԻԻ 39 (20502) ԵԱՐԱԹ, 22 ԱՊՐԻԼ 2000 10 ԷՁ

ԿՈՉ ՀԱՅ
ԺՈՂՈՎՈՒՐԳԻՆ

85ամեակն է 20րդ դարու առաջին ցեղասպանութեան՝ Հայկական Ցեղասպանութեան:
Թեւեկոյն է երբ 21րդ դարը եւ տակաւին ան-
ուրախ կը մնայ Հայկական Ցեղասպանութեան
ծրագրած. գործադրած, հարուստ իր պայտեա-
կան բնօրրակէն տեղահանած եւ Արեւմտահայաս-
տանը բռնագրաւած թուրք պետութիւնը: Այս ան-
պատեհ իրադրութիւնն է փաստորէն, որ ուղղակի թե-
անուղղակիօրէն քաջալեր հանդիսացած է ու կը
շարունակէ հանդիսանալ նոր ցեղասպանութեան
ծրագրաւորման եւ գործադրութեան:

Միեւնոյն ցեղասպանին արհաւիրքը ասորս է
նաեւ մեր իրաւանեան հարեցողը, որուն նկատ-
մամբ ի գործ դրուած օսմանեան քաղաքականու-
թիւնը սուղ արժած է իրաւանցի ժողովուրդին:

Չարդար քաղաքականութեան մէկ տարբեր-
դրեւորումը կը կազմէ այսօր գիւտորաքաղաքա-
կան այն վարքագիծը, որ Թուրքիոյ դաշնակից Իս-
րայէլ կը կիրարկէ իրաւանեան մեր Հայրենիքին
նկատմամբ:

Տեր Զօրէն մինչեւ Կանա իրաւանահայութիւնը
Հայկական Ցեղասպանութեան 85ամեակին առի-
թով՝ ազգային կրկնակի պարտականութիւն ունի
կատարելիք 24 Ապրիլ 2000ի առաւօտուն իր որո-
շագրիչ «ու չը ըսելու ցեղասպանութիւնն է անոր
դաշնակից Իսրայէլին:

Խուճկեալ եւ կարգապահ շարքերով իրաւան-
ահայութիւնը պիտի համախմբուի Անթիլիասի
մայրավանք, 24 Ապրիլ 2000ի առաւօտեան ժամը
9:00ին, ուրկէ սկիզբ պիտի առնէ համաժողովրդա-
յին քայլարշաւը դէպի Պուրն Համուտի Քաղաքա-
պետարանի դաշտը:

Ուրեմն՝ բոլորս. 24 Ապրիլ 2000ին համախմբը-
ւինք Անթիլիասի մայրավանք եւ բազմահազար
հայորդիներ հաշուող հոծ բազմութեամբ հատու-
ցում պահանջենք ցեղասպանէն:

Համաժողովրդային քայլարշաւին մասնակցու-
թեամբ հաւատարիմ մնանք նահատակներու ար-
եան կանչին եւ փաստենք հայութեան միասնական
ուժը:

ՄԱՆՍԹ. - Ժողովուրդը մայրավանք հասցնելու
համար, 85ամեակի միացեալ յանձնախումբը փո-
խադրակառքեր ապահոված է բոլոր շրջաններուն
համար. որոնք 24 Ապրիլ 2000ի առաւօտեան ժամը
8:30էն սկսեալ պիտի գտնուին հետեւեալ վայրե-
րուն մէջ.

- Թրիփոլի.- Սբ. Հոգեգալուստ եկեղեցւոյ առջեւ.
- Փիլիպք.- Թուրքիոյ Բոյնիկ առջեւ.
- Փուլիս.- Սբ. Յարութիւն եկեղեցւոյ առջեւ.
- Փանարի մատրան առջեւ.
- Ռաուտայի մարգարաշտին առջեւ.
- Զայքա.- Սբ. Խաչ եկեղեցւոյ առջեւ.
- Նահր Մոր.- Հայկական շէնքերուն առջեւ.
- Պուրն Համուտի հրապարակ եւ Զաւարեան մար-
գարաշտի առջեւ.
- Էշրեֆիէ.- Սբ. Յակոբ եկեղեցւոյ առջեւ.
- Հայաշէն.- Սբ. Յովնանու Կարապետ եկեղեց-
ւոյ առջեւ.
- Ռըմէլլ.- Սբ. Գեորգ եւ Սբ. Յարութիւն եկեղե-
ցիներուն առջեւ.
- Ամանու.- Թորոսեան դպրոցին առջեւ.
- Մաղկաձոր (Մըզնէր).- ձեմարանի առջեւ.
- Պէրուր.- Սբ. Նշան Մայր եկեղեցւոյ եւ Հայ-
կազեան համալսարանի առջեւ.
- Զանլէ.- Ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցւոյ առ-
ջեւ.
- Այնհար.- Սբ. Պօղոս եկեղեցւոյ առջեւ.

Պուրն Համուտի Քաղաքապետարանի դաշտին
մէջ կայանալիք ձեռնարկէն ետք փոխադրակառքե-
րը ժողովուրդը պիտի վերագրանեն շրջանները:

ՀԱՅԿԱԿԱՆ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ
85ԱՄԵԱԿԻ ՄԻԱՑԵԱԼ ՅԱՆՁՆԱԽՈՒՄԲ

Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ. ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՅ ԿԱԹՈՂԻԿՈՍԻՍ
ՊԵՏՐՈՍ ԿՈՒՐՄԱՆ ԶԱՐՈՒԹԵԱՆ ՏՕՆԻՆ ԱՌԻՍՏՈՒ

«ՓԱՌՔ ՔՐԻՍՏՈՍԻ ԱՄԵՆԱԶՕՐ ՅԱՐՈՒԹԵԱՆ»

Սիրելի ժողովուրդ հայոց ի Սփիւս աշխարհի,
Տօն է այսօր Յարութեան:

Աստուածորդու թափուր գերեզմանից Արարչական Սիրոյ յաղ-
թութեան լոյսով աստուածային փառքն է՝ ճառագում, մեր շորթե-
րից դէպի երկինք բարձրացնելով փառաբանութեան աղօթքը հո-
գեբոյս. «Օրհնեսցուք զՏէր, զի փառօր է փառաւորեալ» (Ել 15.1):

Մեր հայեացքի առջեւ Տիրոջ խաչելութիւնից շփոթահար ու
սարսափած առաքելներն են, վիսափոր գերեզմանը Փրկչի. եր-
կիւղած հոգիներով իողաբեր կանայք, որ լուսազգեստ հրեշտակ-
ներից Աւետիսն են լսում. «Չի՞ խնդրէք զկենդանին ընդ մենայս,
չէ աստ, քանզի յարեալ» (Ղկ 24.5-6):

Ամենայն Հայոց Միաձայն Մայր Աթոռից անհուն բերկրանքով
«յարեալ» Քրիստոս» մեծաքանակ Աւետիսն ենք յղում եւ Հայրապե-
տական մեր ջերմ ողջոյնը բերում Առաքելական մեր Եկեղեցու
նորաբանութեան Աթոռների շնորհագարդ գահակալներին՝ Մե-
ծի Տանն Կիլիկիոյ Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. կաթողիկոսին, Երուսա-
ղէմի Հայոց Ամենապատիւ պատրիարք Տ. Թորգոս արքեպիսկո-
պոս Մանուկեանին, Կոստանդնուպոլսոյ Հայոց Ամենապատիւ
պատրիարք Տ. Մեսրոպ արքեպիսկոպոս Մուրաֆեանին, ուխտա-
պահ ու նուիրեալ ողջ հոգեւոր դասին, հաւատարմ համայն մեր
ժողովրդին աշխարհի բոլոր կողմերում եւ Հայոց պետութեան

Շար.ը՝ էջ 2

Ն.Ս.Օ.Տ.Տ. ԱՐԱՄ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍԻՆ

Ս. ՉԱՏԿՈՒԱՆ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՊԵՏՐՈՍ

«ԴՈՒՒ ԵՍ ՔՐԻՍՏՈՍ, ԿԵԱՆՔ ԵՒ ՅԱՐՈՒԹԻՒՆ ԱԶԳԻ ՍԱՐԴԿԱՆ»

Իր երկրաւոր առաքելութեան ընթացքին, օր մը Քրիստոս իր
աշակերտներուն դառնալով կ'ըսէ՝ «Մարդիկ ի՞նչ կ'ըսեն իմ
մասին»: Աշակերտները կը պատասխանեն՝ «Ոմանք կ'ըսեն, թէ
դուն Յովհաննէս Մկրտիչն էս, ուրիշներ Եղիան կամ մարգա-
րէններն են, որ յարութիւն առած է»: «Իսկ դո՞ւք ինչ կ'ըսէք»
կը հարցնէ Յիսուս: Պետո՞րս առաքելալ անմիջապէս կը պատաս-
խանէ՝ «Աստուծոյ Քրիստոսը»:

Արդարեւ, առաքելը սպրտած ճշմարտութենէ բխող վկա-
յութիւն մըն է, որ կը կատարէ երբ կ'ըսէ՝ «Դուն ես Քրիստոսը,
Աստուծոյ Որդին»: Առաքելային հաւատքի վկայութեան որպէս
պատասխան Քրիստոս կը յայտարարէ՝
«Ո՞վ որ կ'ուզէ իմ ետեւէս գալ, պէտք է ուրանայ իր անձը եւ
իր խաչը առնելով ինձի հետեւի» (ՂՈԻԿ. Թ. 18-23):

Քրիստոնէական հաւատքի ամբողջական ու վաւերական ճա-
նաչման մեր ճիշդ մէջ իւրայատուկ կարեւորութիւն ունի աւե-
տարանական այս դրոշագը: Իր արտաքին ձեւին մէջ Յիսուսի
ու իր աշակերտներուն միջեւ սովորական խօսակցութեան մը
տպաւորութիւնը ձգող այս կարճ հատուածին մէջ խտացուած է
Բեթղեհէմի ճշմարիտ իմաստը, Քրիստոսի անձին իրաւ դիմա-
գիծը, անոր առաքելութեան իւրայատուկ նպատակը եւ, հետե-
ւաբար, քրիստոնէական հաւատքին ճշմարիտ իսկութիւնը:

Շար.ը՝ էջ 2

ՀԱՏԿՈՒԱՆ ՊԵՏՐՈՍ

ԽՈՐՀՈՒՐԴԻ ՄԸ ՀԻՆ ԲԱՅՅ ԵՒ ՄԻՇՏ ՆՈՐ

Քրիստոսի Հրաշափառ Յարութեան խորհուրդը մեծագոյն խորհուրդներէն մին է: Հին եւ յաւիտենա- կան, նոր եւ ժամանակաւոր: Հին՝ ըստ Օրէնքի, նոր՝ ըստ Բանին Աստուծոյ:	Ժամանակաւոր՝ ըստ պատկերի, յաւիտենական՝ ըստ շնորհքի: Մահկանացու՝ գերեզ- մանի մէջ թաղուած, բայց անմահ՝ իր Յարութեամբ: Չունեւած՝ իրրեւ գաւ-	նուկ, Յարութիւն առած՝ իրրեւ Աստուած: ՆԵՐՍԵՍ ՊԵՏՐՈՍ ԺԹ. Կարողիկոս-պատրիարք Տանն Կիլիկիոյ Կարողիկէ Հայոց Շար.ը՝ էջ 8
---	--	---

ՔՐԻՍՏՈՍԻ ՅԱՐՈՒԹԻՒՆ ԾԱՆԱՊԱՐՀ ԿԵԱՆՔԻ

Մեր Տիրոջ Յիսուսի մարդկային ցեղի բոլոր սե-
Քրիստոսի Հրաշափառ լուծողներուն համար ամե-
Յարութեան աւետիսը, նազեղեցիկ եւ ամենակա-

ԹԱՓՈՒՐ ԳԵՐԵԶՄԱՆԷՆ ԱՆԴԻՆ

«Մարտիկան առաջին օրը առաւօտ կանուխ. Մա-
րիամ՝ Մագդաղեանացի եւ միւս Մարիամը գերեզմանը
այցելելու գացին: Եւ անա սաստիկ երկրաշարժ մը
եղաւ: Տիրոջ հրեշտակը երեւցաւ եւ ըսաւ անոնց. «Մի
վախեալ: Գիտեմ. Յիսուսը կը փնտրէք: Հոս չէ՛. յա-
րութիւն առաւ ինչպէս որ ըսած էք» (Մատթ. 28, 1-10):

Երկու կիներու վիճակուեցաւ բախտը՝ հրաշալի
դէպքին առաջին վկաներն ըլլալու: Աներեւակալ ի
առանձնաշնորհում:

ՄԱՆՈՒԷԼ ԵՊՍ. ՊԱԹԱԳԵԱՆ
Ընդհանուր փոխանորդ
Պէրուրի Հ. Կ. Պատրիարքական Թեմին
Շար.ը՝ էջ 9

ԳԵՂԱՄ ԵՊՍ.
ԽԱԶԵՐԵԱՆ
Առաջնորդ Լիբանանի
Հայոց Թեմին
Շար.ը՝ էջ 3

ԼՈՅՍ ՏԵՍԱԻ

ԱԶԳԱԿ 24 ԱՊՐԻԼ 2000

«ԱԶԳԱԿ»Ի ԱՊՐԻԼ 24Ի
ԲԱՅԱՌԻԿԸ

ՀԱՅԿԱԿԱՆ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ 85ԱՄԵԱԿ
ԵՐԿՈՒՇԱԲԹԻ, 24 ԱՊՐԻԼ 2000

● Առաւօտեան ժամը 10:00ին

ՀԱՄԱԺՈՂՈՎՈՐԴԱՅԻՆ ՔԱՅԼԱՐՇԱԿ
Անթիլիասի Մայրավանքէն դէպի Պուրն Համուտի Քաղաքապետարանի դաշտը

● Կեսօրուան ժամը 12:00ին

Քայլարշաւէն ետք

ՀԱՄԱԺՈՂՈՎՈՐԴԱՅԻՆ ՀԱԻԱՔ
Պուրն Համուտի Քաղաքապետարանի դաշտին վրայ
Շովանաւորութեամբ՝ ԼԻԲԱՆԱՆԻ ԽՈՐՀՐԴԱՐԱՆԻ ՆԱԽԱԳԱՀ ՆԵՊԻՉ ՊԸՐՐԻԻ

ՀԱՅԿԱԿԱՆ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ 85ԱՄԵԱԿԻ ՄԻԱՑԵԱԼ ՅԱՆՁՆԱԽՈՒՄԲ

ՏՕՆԱԿԱՆ ՕՐԵՐՈՒՆ ՊԱՏՃԱՌՈՎ

ՔՈՖԻ ԱՆԱՆԻ ՅԱՏՈՒԿ ՊԱՏՈՒԻՐԱԿ ԹԵՐԻ ԼԱՐՍԸՆ ՅԵՏԱԶԳԵՅ ՇՐՋԱՆ ԻՐ ԱՅՅԵԼՈՒԹԻՒՆԸ

ՄԱԿԻ պաշտոնատարներ երկվ յայտարարեցին, որ յետաձգուած է կազմակերպութեան ընդհանուր քարտուղար Քոֆի Անանի յատուկ պատուիրակ թէրի Ռոտ Լարսընի միջին արեւելեան շրջապտոյտը:

ՄԱԿԻ Ապահովութեան Խորհուրդը նախանցեալ գիշեր որդեգրած էր հաղորդագրութիւն մը, ուր կոչուողած էր առնչակից բոլոր կողմերուն գործակցելու, որ Լիբանանէն խորաշխեան ուժերու հեռացումը վայրագութեանց մագլցում չպատճառէ, եւ վերահաստատած անհրաժեշտութիւնը շրջանին մէջ հաստատելու արդար եւ ամրողական խաղաղութիւն: Հաղորդագրութիւնը Անանին կը պահանջէր ճշդել իր թիւ 425 որոշումի իսրայէլի կողմէ գործադրութեան հեզասահ ընթացքը ապահովող միջոցառումները եւ հաւանութիւնը տուած էր՝ այս գծով Լարսըն Միջին Արեւելք գործողելու Անանի որոշումին:

Լարսըն, որ Երեքշաբթի օր պիտի գար շրջան, նախ այցելելու Իսրայէլ, ապա Լիբանան, Սուրիա, Յորդանան եւ Եգիպտոս, այս շրջապտոյտը յետաձգած է քրիստոնէական ու հրէական տօներուն առիթով, եւ անոր պիտի ձեռնարկէ Մայիսի սկիզբին, ըսին ՄԱԿԻ արդիւրները:

Այս միջոցին, Փարիզի մէջ կը սպասուէր ժամանումը ՄԱԿԻ յատուկ պահանջարկերի մը, որ պիտի հետաքրքրուի Ֆրանսայի պաշտօնական արխիւներով, որոնք կը վերաբերին Լիբանանի ու Պաղեստինի վրայ ֆրանսական ու րրիտանական խնամատարութեան օրերուն, այդ երկուքին միջև 1923ին ճշդուած սահմանագծին, Լիբանանի եւ Իսրայէլի միջև վերջինին կողմէ սահմանի ճշդումի հարցին գծով պատկերացում մը պատրաստելու եւ Լարսընի միջոցով գայն Քոֆի Անանի ներկայացնելու համար:

ՀԱՐԱԻ ԿԱՑՈՒԹԻՒՆԸ ԿԸ ՄՆԱՅ ԼԱՐՈՒԱԾ

Իսրայէլեան ուղղաթիւները երկվ առաւօտ ուժրակօծեցին Նապաթիէի Շուքին եւ Մայֆատուն գիւղերուն միջև գտնուող շրջանը, ինչպէս նաեւ՝ Մայֆատուն ձորը: Անոնք նաեւ հրթիռ մը արձակեցին Նապաթիէի «Մարաշ» թրջամասին վրայ, բայց անիկա չպայթեցաւ, թէեւ պատճառեց նիւթական վնասներ:

Իսրայէլեան հրետանին ուժրակօծեց Արապսայիմ, Զահրանի, Ռաֆիհ եւ Թասէ շրջանները:

Հրդպայա գուժեց նահատակութիւնը իր անդամներէն Մահմաձ Ալիսարի, (ծնած՝ 1980ին)՝ յայտնելով, որ ան գոհուած է հարաւի վրայ իսրայէլեան սղուժի երկկան յարձակումներուն դիմադրած առեւն:

ՔՐԻՍՏՈՍԻ ՅԱՐՈՒԹԻՒՆ ԾԱՆԱՊԱՐ Հ ԿԵԱՆՔԻ

Շարունակուած Ա. ԷջԸԹ

Երկրաւոր յոյսը իշխանութիւնները, տէրութիւնները, կայսրերն ու աշխարհակալները, իրենց գորութեամբ մը ու փառքով, անգորմնացած են մահուան դիմաց եւ ենթարկուած անոր անրեկանելի վճիռին:

Անդրիլիմեան կեանքի յոյսն ու ակնկալութիւնը գորդեցուցած է մարդկային միտքը: Փարաւոններու դամբարան րուրգերը ինքնին շշագփելի օրինակներ են, յետ մահու կեանքի կարծիքները ինքնուրու մտաւոր ունեցած ակնկալութեան եւ խարխափող հաւատքին:

Հին աշխարհի իմաստասիրական տեսութիւնները՝ աննիւթական կեանքի մասին եւ աշխարհակալներու ու թագաւորներու յաւերժ ապրելու տենչը սոսկ վերացական գաղափարներ մնացին: Ու մարդկային կեանքը շարունակեց իր թաւալքը անորոշ, մինչեւ այն պահը, երբ աստուածային միջամտութիւնը եկաւ յստակ ուղի եւ նպատակ ճշդելու մարդուն, ինչ կը վերաբերի իր կեանքին:

Այդ պահը, ինքնին, իր անկիւնադարձային կարեւորութեամբ եղաւ երկրորդ ստեղծագործութիւն: Առաջին ստեղծագործութեան խորհրդանշանը

խոսքերեղա «Ելիցի Լույս» եւ երկրորդ ստեղծագործութեան խորհրդանշանը՝ «Զէ աստ, ալլ յարիա»:

Աստուծոյ հրեշտակին շեշտակի խոսքերը, իրենց մեռած վարդապետի թափուր գերեզմանին դիմաց կանգնած երկու աշակերտներուն ուղղուած, եղան յաւիտենականութեան առաջնորդող կեանքի ճամբուն սկիզբը:

Քրիստոս, իր երկրաւոր կեանքի ընթացքին մէջ կէտեփառութեամբ իր աշակերտներուն ըսաւ, որ խաչի վրայ պիտի մեռնի եւ ապա երրորդ օրը յարուած լինու պիտի առնէ: Սակայն, որքան որ այս խոսքերը ըսողը նոյնինքն հրաշագործ եւ մեծիկ վարդապետ էր, աշակերտները իրենց մարդկային ըմբռնողութեամբ, պիտի չկարենային ամրողութեամբ ըմբռնել, մինչեւ որ ականատես չլրլային վարդապետի թափուր գերեզմանին եւ ականջալուր չլրլային հրեշտակին յանդիմանական շեշտով խոսքին, թէ ինչու ողջը մեռելներուն մէջ կը փնտռեն, երթան եւ իր աշակերտներուն յայտնեն, որ յարութիւն առաւ:

Այդ վայրկեանէն սկսեալ մարդուն ուրախութեամբ

ԱՂՐՊԵՅՃԱՆ ԼՂԻ ԵՐԵՍՓՈՒՄԱՆԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ ԿԸ ՆԿԱՏԵ ԱՐԱՐՔ ՍԸ ԻՐ ԳԵՐԻՇԽԱՆՈՒԹԵԱՆ ԴԵՍ

ՊԱՔՈՒ, 21 (ԱՐՄԵՆՓՐԵՍ).- Ազրպէյճանի արտաքին գործոց նախարարութիւնը ԼՂՀի մէջ երեսփոխանական ընտրութիւններ կազմակերպելու որոշումը որակեց իբրեւ «Ազրպէյճանի հողային ամբողջականութեան եւ գերիշխանութեան դէմ կատարուող, յինչպէս նաեւ՝ երկրին սահմանադրութիւնը եւ օրէնքները յախտող քայլ մը»:

Ազրպէյճանի արտաքին գործոց նախարարութեան հաղորդագրութեան մէջ նշուած է նաեւ, «ընտրութիւնները մարտահրաւեր են միջազգային իրաւական հասկացողութիւններուն եւ կը փորձեն օրինական ընդդէմ դէմքով առնուած յշխանութեան՝ Ազրպէյճանի բաղկացուցիչ մէկ շրջանին մէջ»:

Նոյն հաղորդագրութիւնը կ'աւելցնէ, որ Ազրպէյճան պիտի չճանչնայ ընտրութիւններուն արդիւնքները:

ԲԱՐՈՅԱԿԱՆ ԶԵՆՔ ՄԸ ՏԱՆՈՎ ՓՈՒԹԻՆԻ

ՌՈՒՍԻՈՅ ՏՈՒՄԱՆ ԿԱԵՐԱՑՈՒՑ ԿՈՐԻՉԱՅԻՆ ՓՈՐՉԱՐԿՈՒՄՆԵՐԸ ԱՐԳԻԼՈՂ ՅԱՍԱԶԱՅՆՈՒԹԻՒՆԸ

ՄՈՍԿՈՒԱ, 21 (ՌՈՅԹԸՐԸ).- Ռուսիոյ Պետական Տուժան Ուրբաթ օր վաւերացուց կողմային փորձարկումները արգիլող համաձայնութիւնը, նորրոտոր նախագահ Վլատիմիր Փուտինի բարոյական զէնք մը տալով՝ յառաջիկայ շաբաթ Մ. Նահանգներու մէջ տեղի ունենալիք զէնքերու վերաբերեալ բանակցութեանց նախօրեակին:

Պետական Տուժայի դռնփակ նիստին՝ 74ի դէմ 298 քուէներով եւ 3 ձեռնպահութեամբ, երեսփոխանները վաւերացուցին ՍԻ. ԹԻ. ՊԻ. ԹԻ. համաձայնութիւնը:

Համայնավարները, որոնք Տուժային մէջ մեծագոյն կուսակցութիւնը կը կազմեն, մտահոգութիւն արտայայտած են համաձայնութեան մասին, որ տակաւին չէ վաւերացուած Մ. Նահանգներու, Չինաստանի եւ րանայի այլ պետութիւններու կողմէ:

Սակայն Տուժային մէջ Փուտինի ներկայացուցիչը Ալեքսանտր Քոթենքով, մերժեց այդ մտահոգութիւնները ընդունելով՝ յայտնելով, որ եթէ Ռուսիա որոշէ վերջ տալ կորիզային փորձարկումները առկայելու վճիռին, կրնայ վերսկսել փորձարկումները: «Համաձայնութիւնը ի գորտ կը դառնայ միայն երբ բոլոր կողմերը գայն վաւերացնեն», ըսաւ ան:

ԱՐԱՒԱԹԻ ԷՆՏ ՏԵՍԱԿՅԵԼԷ ԵՏԸ

ՔԼԻՆԹՆ ԼԱԲԱՏԵՍՈՒԹԻՒՆ ԿԱՐՏԱՅԱՅՏԵ ՊԱՂԵՍԻՆԵԻՍՐԱՅԷԼԵԱՆ ԲԱՆԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ ԱՐԴԻՆԱԴՈՐՄԱՆ ՆԿԱՏԱՍԲ

Մ. Նահանգներու նախագահ Պիլ Քլինթոնը պաղատական խնդրեց Լիբանանի իշխանութեան նախագահ Եսսէր Արաֆաթի հետ հինգշաբթի օրու չինգշաբթի օրու յայտնած է, թէ կան իր տեսակցութեան հետ յարաբերութեան մասին խոսակցութեան հարցը: Արաֆաթը յայտնեց, որ վերաբերի Միջին Արեւելքի մէջ խաղաղութեան հաստատման մէջ կարելիութեամբ՝ խոստանալով աւելի եւս պարկտայ ամերիկեան ճիգերուն, գործընթացը առաջ մղելու համար յստակ ժամանա-

տահարելը պիտի չըստանայ. ընդգծեց ան: Արաֆաթի հետ տեսակցութեան առաջ Քլինթոնը թղթակցեց Լիբանանի իշխանութեանը վերջնական տակաւին դժուարութեան հարցը: Արաֆաթը յայտնեց, որ վերաբերի Միջին Արեւելքի մէջ խաղաղութեան հաստատման մէջ կարելիութեամբ՝ խոստանալով աւելի եւս պարկտայ ամերիկեան ճիգերուն, գործընթացը առաջ մղելու համար յստակ ժամանա-

կացոյց մը հշրած են կարելի եղածին շարժում համաձայնութեան ծիրի մը, ապա՝ մինչեւ Սեպտեմբերի կէսերը վերջնական համաձայնութեան մը յանգելու համար: Քլինթոնը ընդգծեց, որ եթէ երկու կողմերը պատրաստ են, ինք էլ Մ. Նահանգներ անհրաժեշտ քայլերու պիտի կատարեն մը համար: Պարաք իրենց հաւար յստակ ժամանա-

ԾԵՄԻՆ ՅՈՒՆԱՍՏԱՆ Կ'ԱՅՅԵԼԷ

ԱԹԷՆՔ, 21 (ՌՈՅԹԸՐԸ).- Չինաստանի նախագահ Ճիանկ Մեմին Ուրբաթ օր Յունաստան հասաւ Եռօրեայ պաշտօնական այցելութեան մը համար՝ երկու երկիրներուն միջև առեւտրական եւ դրամադրական կապերը զարգացնելու նպատակով:

Յոյն պաշտօնատարներ յայտնած են, թէ Ճիանկի այցելութեան զաղաքական մեծ նախաձեռնութիւններ չեն ակնկալել, սակայն կը յուսան առեւտրական եւ դրամադրական կապերը զարգացնել:

Յունական յրատու արդիւրները յայտնեցին, թէ երկրին մէջ մարդկային իրաւանց խնդրները ինքնին խորհրդանշան են իրաւանց կոչուող ճիգերուն: Ճիանկի այցելութեան ժամանակ Միջին Արեւելքի իրաւանց հարցը:

«ԱԶԳԱԿ ԲԱՅԱՌԻԿ» ՃՇՂՈՒՄ «Ազգակ»-ի 24 Ապրիլ 2000ի բացառիկ թիւին «Ինքնաբնակումի անըրաժեշտութիւնը» յոդուածին (Էջ 30) առաջին բաժնին մէջ միութիւններու ներկայացուցիչներու անուններու շարքին պէտք է աւելցնել «Հ.Յ.Բ. Լիբանանի Երիտասարդական Միութեան ներկայացուցիչ Հուրի Թոնգեան»:

Հ.Բ.Ը.Մ. Հ.Ե.Ը. 3ԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ Ապրիլի 24ի համաժողովը կ'ընդունէ քայլարշախի մասնակցող Հ.Բ.Ը.Մ. - Հ.Ե.Ը.ի բոլոր անդամներուն եւ համակիրներուն հաւաքովայնը կոչուող առաւօտեան ժամը 8:00ին. Հ.Բ.Ը.Մ. Տեմբերեան կեդրոն:

ԱՊՐԻԼ 20ԷՆ 25 ԵՂԵՐՆԻ 85ԱՄԵԱԿԻՆ ԱՌԻԹՈՎ ԿԱՆԱՅ ԶԱՅՆԵՆ ՅԱՏՈՒԿ ՅԱՅՏԱԳԻՐՆԵՐ ԿԱՆԱՅ ԵՏԱՐ ԿՐՕՆԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԱՆՉՆԱԴՈՐՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ ՎԿԱՅՈՒԹԻՒՆՆԵՐ ԿԱՅԱՍՏԱՆԷՆ, ԱՐՅԱՍԷՆ ԵՒ ՍՓԻՌՔԻ ԶԱՆԱԶԱՆ ԳԱՂՈՒԹՆԵՐԷՆ ԶԱՅՆԱՍԸՌՈՒՄՆԵՐ ԶԵՌՆԱՐԿՆԵՐՈՒ ՈՒՂՂԱԿԷ ՍՓՈՒՄՆԵՐ ԳԵՂԱՐՈՒԵՍԱԿԱՆ ՅԱՏՈՒԿ ՅԱՅՏԱԳԻՐՆԵՐ ԿԱՆԱՅ ԶԱՅՆ, FM 94.7Mhz: Գեղամայն 241199, 241272

24 ԱՊՐԻԼԻՆ ԲԱԶՄԱՀԱԶԱՐ ՀԱՅՈՐԴԻՆԵՐ ՔԱՅԼԱՐՇԱԻ ՅՈՒՑԱԿԱՆ ԱՔԹՈՎ ԻՐԵՆՑ «ՈՉ»Ը ՊԻՏԻ ԸՍԵՆ ՑԵՂԱՍՊԱՆ ԹՈՒՐՔԻՆ

ԿԼԵՆՏԵՅԼԻ ՔԱԳԱՔԱՂԵՏՈՒԹԻՒՆԸ ՀՈՉԱԿԱԳՐՈՎ ՄԸ ՈԳԵԿՈՉԵՅ ԵԳԵՆԻ 85ԱՄԵԱԿԸ

Կլենտեյլի քաղաքացիական խորհուրդը Երեքշաբթի, 18 Ապրիլի իր նիստին, հրապարակեց Հայկական Յեղասպանության ճանաչման օրակարգի մասին ֆաղաքացիական խորհրդի կողմից հրապարակված և յարգանքի հայտարարությունը:

Քաղաքացիական խորհուրդի անդամ Բաֆֆի Մանուկյանը ներկայացրեց հուշակագրի բանաձևը, որ վաճառվելու է անդամներու մեծամասնության համար, եւ ստորագրուեց Կլենտեյլի խորհրդի քաղաքացիական խորհրդի կողմից:

Կլենտեյլի հայուհիները ներկայացրին ստանձնեցին հուշակագիրը:

«Մարտի 22-ի օրը տեսնել, որ ընդհանուր կազմակերպությունները ներկայ կլին քաղաքացիական խորհուրդի նիստին: Այս կր վկայել, թե Յեղասպանության հարցը բոլորին համար առաջնահերթ հարց է, ըստ Բաֆֆի Մանուկյանի»:

Իսկ Կլենտեյլի Հայ Դատի Ցանձնախումբի ատենապետ Յարոլթ Մանուկյանը յայտնեց. «Կլենտեյլի հայկական գաղութը կր գնահատի քաղաքացիական խորհուրդի ծիսը, Հայաստանի Յեղասպանության հարցը արժանապատիվ պահելու եւ վստահեցնելու համար, որ Հայաստանը իր հայուհիները ամեն կերպով պահպանելու է իր իրավունքները»:

ՓԵՆՍԻԼՎԱՆԻՈՅ ԼԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉՆԵՐՈՒ ՏՈՒՆԸ 24 ԱՊՐԻԼԸ ՀՈՉԱԿԵՑ ՅԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ ԶՈՂԵՐՈՒ ՅԻՇԱՍԱԿԻ ՕՐ

Փենսիլվանիայի ներկայացուցիչներու Տունը միաձայնությամբ վաճառեց 24 Ապրիլը կը համարէ «Յիշատակի օր» յարգանքի Հայկական Յեղասպանության ճանաչման օրը:

Որոշումը առաջարկուեցաւ Սուզան Լալիին կողմէ: Անիկ կը ըսէ. «Մեկուկէս միլիոն հայեր ջարդուեցան Օսմանեան Կայսրութեան կողմէ. այս Ողբերգութիւնը 20րդ դարու առաջին Յեղասպանութիւնն է եւ անիկ կը ծառայէ իբրեւ նախընթաց Ողբերգութեան, որ գործադրուեցաւ Բ. Աշխարհամարտին»:

ԼԵՈՒԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՆԱԽԱԳԱՀԻ ՄԱՀԱՓՈՐՁԻՆ ԱՌՆՉՈՒՄԸ 6 ԲԱՆՏԱՐԿԵԱԼՆԵՐ ԱԶԱՏ ԱՐՁԱԿՈՒԹԵՅԱՆ

«10րդ Նահանգ» թերթի խմբագրութիւնը հարցրեց, թե 22 Մարտին Լեւոնային Ղարաբաղի նահապահ Արկարի Դուկասեանի ղեկավարութեամբ մահափորձին առնչուող 6 բանտարկեալները՝ Գարեգին Դադարեան, Սերժ Առուշանեան, Թուրքի Յիւսէֆը, Լիւնիս Մատրեան, Թուրքի Իսրայէլեան եւ Արկարի Կարապետեան Զորքարթի, 19 Ապրիլին ազատ արձակուեցան, մինչեւ յնուարեաններու աւարտ քաղաքէն չհրապարակուէր պայմանով:

ՆԱՅԻՐԻ ՅՈՒՆԱՆԵԱՆԻ ԱՐԳԵԼԱԳԱԿՈՒՄԸ ԵՐԿԱՐԱԶԳՈՒԹԵՅԱԻ

27 Հոկտեմբերի դէպքով զբաղող զինուորական դատարանական դիմումին ընդառաջելով Երեւանի Արքեպիսկոպոս Բանաբեհ-Չէլքունի համալսարանի անդամները անդամները դատարանը երկու ամիսով երկարաձգեց գլխաւոր մեղադրեալ Նայիրի Յունանեանի, անոր եղբոր՝ Կարէն Յունանեանի եւ ներքին գործոց նախարարութեան աշխատակից Աւետիք Մինասեանի արգելափակման ժամկէտը:

Ըստ քննիչ իւրմբի ղեկավար Արտակ Յարութլեանի, 19 Ապրիլին զինուորական դատարանին կողմէն նոյն առաջարկով դիմեց դատարան՝ այս անգամ մեղադրեալներ Աշոտ Գեղիգեանի եւ Համէթ Ստեփանեանի համար, որոնք մեղադրուած են 27 Հոկտեմբերի սերտիս արարքին օժանդակելու ըլլալու լսեցանքով: Ինչպէս օրը անկող «ԻՒԱՅ» տեսակի ինքնաշարժի մը մէջ կը սպասէին, որպէսզի արարքէն ետք զուրպ իրարանցում ստեղծելով բազմաթիւն հաւաքէին՝ իբրեւ օժանդակութիւն զլիւար իւրմբին:

Ս. ԶԱՏԻԿԸ Ս. ՍԱՐԳԻՍ ԵԿԵՂԵՑԻՈՅ ՄԵՉ

Կիրակի, 23 Ապրիլ, Ս. Յարութեան տունին առիթով, հանդիսաւոր Սուրբ եւ Անմահ պատարագ պիտի մատուցուի Նոր Սիսի Սուրբ Սարգիս եկեղեցու մէջ:

Պիտի պատարագ եւ պիտի քարոզէ՝ **ՀՈԳԵՇ. Տ. ՇԱՀԱՆ Օ. ՎՐԴ. ՍԱՐԳԻՍԵԱՆ**

- Սկիզբ ժամերգութեան՝ Ժամը 7:30ին
- Սկիզբ Ս. պատարագի՝ Ժամը 10:00ին
- Քարոզ՝ Ժամը 11:30ին

Սիրով կը հրաւիրուին բարեպաշտ հաւատացեալները՝ ներկայ գտնուելու Սուրբ պատարագին եւ հոգեպէս վերանորոգուելու Սուրբ Յարութեան խորհուրդով:

ԹԱՂԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ Ս. ՍԱՐԳԻՍ ԵԿԵՂԵՑԻՈՅ

«ՊՈՒՍԱՀԱՅ ՄՇԱԿՈՅԹԻ ՕՐԵՐ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԷՋ

«ՄԷԿ ազգ, մէկ հայրենիք» փառասօցի շքանակներէն ներս, 18ԷԿ 25 Ապրիլ Հայաստանի մէջ տեղի կ'ունենան պատմաւ մշակութիւն օրեր: Այս առիթով ազգէն իսկ Երեւան ժամանած են պատմաւ մշակութիւն գործիչներ, որոնց պատուիրակութիւնը 19 Ապրիլին ընդունուեցաւ Հայաստանի մշակութիւն նախարար Ռոյալտ Շահումեանի կողմէ:

Ընդգծելով ձեռնարկին կարեւորութիւնը՝ նախարարը մարտից, որ նման ձեռնարկները այսուհետեւ աւանդական դառնան: Իր կարգին, պատմաւ գրող Մկրտիչ Մարկոսեան ընդգծեց սփիւռքահայ եւ հայրենի մշակութային կեանքին միաւորումը: Միւս կողմէ, պատմաւ գրողներ անդամները մտահոգութիւն յայտնեցին Քուրթի, եւ Հայաստանի միջեւ գոյութիւն չունեցող դիւանագիտական յարաբերութիւններուն եւ պատմական մակարդակով մշակութային միացեալ ձեռնարկներ չի բաժանուող հարցին մասին: Որոշուեցաւ յառաջացնել աշխատանքային յանձնարարութիւն՝ ապագային միացնել ծրագրերը մշակելու համար:

Ինչպէս 19 Ապրիլին, Ամենայն Հայոց Գարեգին Բ. կարողուի Ս. Էջմիածնի վեհարանին մէջ ընդունեց եւ օրկնեց հայրենիք ժամանած աւելի քան 200 պատմաւ ու յիշատակներ:

Ուխտաւորներուն կ'ընկերակցելու եւ Պոլսոյ Ս. Երից Մանկանց եկեղեցու, «Մայր Նովա» երգչախումբը, որ Ս. Յարութեան տունին առիթով, Բջինի եկեղեցու մէջ Ս. պատարագի երգեցողութիւնը պիտի կատարէ:

Յայտնենք, թէ պատմաւ մշակութիւն օրերու յայտագրին համաձայն, 20 Ապրիլին երկու ցուցահանդէսներու բացում պիտի կատարուի. առաջինը՝ «Հայ Պոլիս» Չարեցի անուան թանգարանին մէջ, իսկ երկրորդը՝ Հայաստանի Պետական պատկերասրահին մէջ, ուր պիտի ցուցադրուին պատմաւ նկարիչներու գործերը:

Միւս կողմէ, 21 Ապրիլին Հայաստանի Գրողներու Տան մէջ տեղի պիտի ունենար պատմաւ գրող եւ նրատարակիչ Մկրտիչ Մինասեանի «Տիգրիսի ափերուն» գրքի գինեօթիւ, իսկ 22 Ապրիլին Սուրբ Երեմիայի անուան Ազգային Ակադեմիական Թատրոնին մէջ պիտի ներկայացուէր պատմաւ թատերագիր Արման Վարդանեանի «Ախաբեթ» բատերգութիւնը:

Ս. ԶԱՏԿՈՒԱՆ ՀԱՆԴԻՍԱՒՈՐ ՊԱՏԱՐԱԳ Ս. ՆՇԱՆ ՄԱՅՐ ԵԿԵՂԵՑԻՈՅ ՄԵՉ

Տեսնել մերոյ Յիսուսի Քրիստոսի Հրաշափառ Յարութեան տունին առիթով Կիրակի, 23 Ապրիլ 2000. Սուրբ Նշան Մայր Եկեղեցու մէջ պիտի մատուցուի Սուրբ եւ Անմահ պատարագ:

Պիտի պատարագ եւ պիտի քարոզէ՝ **ԳԵՐՇ. Տ. ԳԵՂԱՄ ԵՊՍ. ԽԱՉԵՐԵԱՆ**

(Առաջնորդ Լիբանանի Հայոց Թեմի)
Սկիզբ ժամերգութեան՝ Ժամը 7:30ին
Ս. պատարագ՝ Ժամը 9:30ին
Քարոզ՝ Ժամը 11:00ին

Սիրով կը հրաւիրուի մեր սիրելի ժողովուրդը ներկայ գտնուելու Սուրբ եւ Անմահ պատարագին, վերանորոգուելու համար Սուրբ Յարութեան խորհուրդով եւ լսելու առաջնորդ սրբազան հօր պատարագը:

ԹԱՂԱԿԱՆ ՈՒՐԻՒԻՆ Ս. ՆՇԱՆ ՄԱՅՐ ԵԿԵՂԵՑԻՈՅ

ԾԱՆՈՒԹ. - Առաջնորդ սրբազան հայրը Չատուան շնորհաւորութիւններ պիտի ընդունի Ս. պատարագի ետք մինչեւ Ժամը 1:00 եւ կէսօրէ ետք Ժամը 4:00էն 6:00. Քաղաքի Ազգային առաջնորդարանի դահլիճին մէջ:

ԱՅՆՈՒՐ ԱՅՆՈՒՐ ՀԱՅԿԱԿԱՆ ՅԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ 85ԱՄԵԱԿ ԸԱՆԴԻՍՈՒԹԻՒՆ

Մասնակցութեամբ գիւղիս քոյր երեք եկեղեցիներուն, մարմիններուն եւ համայն ժողովուրդին:

Բանախօս՝ ՏՈՒՐ. ԳՐԻԳՈՐ ԷԺԻՏԵԱՆ Գեղարուեստական յայտագիր Շաբաթ, 22 Ապրիլ 2000, երեկոյեան ժամը 8:00ին. «ՇԵՏՈՒԻԿ» սրահ:

- ՄՈՒՍՎԱՆՈՒԹԻՒՆ
Գիւղիս գլխաւոր հրապարակի վրայ Կապուկերպութեամբ Հ. Յ. Գ. Յատագ Պատ. Միութեան Կիրակի, 23 Ապրիլ, երեկոյեան ժամը 8:30ին

- ՈՒԵՏԱԳՆԱՅՈՒԹԻՒՆ ԴԵՊԻՏԵՐ ԶՕՐ ԵՒ ՄԱՐԿԱՏԵ
Մեկուս՝ Կիրակի, 23 Ապրիլ 2000, կէսօրէ ետք ճիշդ ժամը 2:00ին:

- ՄԱՍՆԱԿՑՈՒԹԻՒՆ ՊԵՅՐՈՒԹԻ ՀԱՄԱՍՏՈՒՆՎՈՐՈՒՄԻ ՔԱՅՆՈՒՆԵՆ ԵՒ ՀԱՒԱՔԻՆ
Ժողովուրդին տրամադրուած պատկեր կը մեկնին Երկուշաբթի, 24 Ապրիլի առաւօտուն, ժամը 7:30ին, «Բ. Սիւնի» ակումբին առջեւ:

Հ. Յ. Գ. ԴԱՍՏԻՆԱՐԱԿԱԿԱՆ ՀԱՆՉԵՆՈՒՄԸ

ՊԱՌԱՍԻ ԸՆԴԱՔԱՊԵՏՈՒԹԻՒՆ ԿՈՒՔԵ ԳՐԱԵԼ Ս. ՆՇԱՆ ԵԿԵՂԵՑԻՆ ԸՈՒԱՍԱՍ ՄԸ

Թրքական «Հիւրիք» թերթը իր Պոլսոյ Նուիրուած յաւելուածին մէջ նշած է, որ Գարեգին քաղաքացիական խորհրդի կողմէ Գարեգին Ս. Նշան Հայոց եկեղեցին մերձակայքէն հողամաս մը, որպէսզի գոյն կցէ ճամբան ընդարձակելու ծրագրին:

Այս առնչութեամբ եկեղեցու թաղային խորհուրդի ատենապետ Մարի Էօգչիկը պնդած է, թէ քաղաքացիական խորհրդի կողմէ առանց փոխարժէքի վճարելու փոխ տայ եկեղեցին պատերը եւ ներս մտնելու մինչեւ եօթը մեթր, մինչդեռ եկեղեցին արձանագրուած է հնութիւններու եւ թանգարաններու ցանկին մէջ, այս պատճառով կարելի չէ գոյն սեփականացնել կամ փոխ տայ:

Մարի Էօգչիկը պնդելով՝ երբեք չի կրնար զիջուած լինելու հետեւեայ կերպով: «1972ին մեր եկեղեցու հողամասին վրայ ձեռք դրին առանց փոխարժէքի վճարելու եւ հոն կ'ընդարձակուէր: Դատ րացիներ, որ ինչպէս չ'ընդունէր իրենց հողերը: Ընդունելու կը ձգեմ պատասխանատուներու խղճմանը»:

Այս առիթով Մարի Էօգչիկը «Հիւրիք» թերթին ըստ, թէ շատ սխալ է այս խնդրին մտնելը: «Ասիկա կեանքի ապրանք է, կարելի է ուտել» մտածելակերպով:

Իր կարգին, Գարեգին քաղաքացիական խորհրդի կողմէ Ս. Նշան Հայոց եկեղեցու մէջ նշան Մայր Եկեղեցու մէջ պիտի մատուցուի Սուրբ եւ Անմահ պատարագ: Պիտի քարոզէ՝ **ԳԵՐՇ. Տ. ԱՐՏԱԻԱԶԴ ԼԱՐՔ. ԹՐԹՈՒԵԱՆ**

ԳՐԱՌՈՒԾ ՕՐ

ՇԱԲԱԹ, 13 ՄԱՅԻՍ 2000, ՀԱՄԱԶԳԻԱՅԻՆԻ «ԲԱՐՍԵՂ ԿԱՆԱԶԵԱՆ» ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ՔՈՒԷՃ

Սիրով կը հրաւիրուի մեր սիրելի ժողովուրդը ներկայ գտնուելու Սուրբ եւ Անմահ պատարագին, վերանորոգուելու համար Սուրբ Յարութեան խորհուրդով եւ լսելու առաջնորդ սրբազան հօր պատարագը:

ԳՐԱՌՈՒԾ ՕՐ

ՇԱԲԱԹ, 13 ՄԱՅԻՍ 2000, ՀԱՄԱԶԳԻԱՅԻՆԻ «ԲԱՐՍԵՂ ԿԱՆԱԶԵԱՆ» ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ՔՈՒԷՃ

STUDIO **Lantern**
• Կը ստանձնէ ուրախ առիթներու video նկարահանումներ
Ընդ. 01-268866
Եւ 03-895399

ԾԱՆՈՒՅՈՂՆԵՐՈՒ ՌԵՍԱՐՈՒԹԵԱՆ

«Ազգակ»ի մէջ ազգային կամ առեւտրական ծանուցումներ հրատարակելու ֆալսաբանութիւնը կը խնդրուի ծանուցումներ ընդունելու գիրով (հաստատութեանց պարագային) մասնաւորաբար պաշտօնական թուղթի վրայ, եւ՝ հաստատուած՝ Գերիսայցեան «Ազգակ»ի ծանուցումներու գրասենյակը:

ՈՉ ԵՒՍ Է ԳԵՂԱՆԿԱՐԻՉ ԳՐԻԳՈՐ ԽԱՆԶԵԱՆ

19 Ապրիլին Երեւանի մէջ 74րդ տարեկանին մահացաւ հայ մեծահասակ գեղանկարիչ եւ խորհրդային պետական մրցանակի դափնեկիր Գրիգոր Խանջեան:



Գրիգոր Խանջեան ծնած է Երեւանի մահապաշտական կրթութիւնը ստացած է Երեւանի գեղարուեստական ուսումնական հաստատութիւններուն մէջ: Նկարած է յատուկ թեմաներով պատմութիւն, բնանկարներ եւ դիմանկարներ. ազգային շունչը շեշտուած է իր կտաւներուն մէջ: Խանջեան նկարազարդած է բազմաթիւ երկեր. ինչպէս՝ «Լոռեցի Սարո», «Անյոյնի Չանգակատուն» եւ «Սասնոցիների Պարը»:

Խանջեան անհատական ցուցահանդէսներ տուած է Երեւանի եւ այլ քաղաքներու յայտնի մշակութային կեդրոններուն մէջ: Խանջեանի մահով նա մշակութային ընդհանրապէս եւ գեղանկարչութիւնը մահաւորաբար մեծ կորուստ կը կրէ:

«ԼԵՈՒԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂ ԱԶՐՊԵՅՃԱՆԻ ՎԵՐԱՀԱՅՈՒՐՈՒԹԵԱՆ ԴՈՒՐՍ Է»

Վերջերս Ազրպէյճանի Կեդրոնական ընտրական յանձնախումբը հրապարակեց յայտարարութիւն մը, որով այս տարուան 18 Յունիսին Լեւոնային Ղարաբաղի խորհրդարանական ընտրութիւններու կաշառման անց տեղի իբրեւ «Ազրպէյճանի տարածքային ամբողջականութիւնը չ'արգելու» քայլ:

Այս առնչութեամբ Հայաստանի մէջ Լեւոնային Ղարաբաղի մշտական ներկայացուցիչ Կարէն Միրզոյեան յայտնեց, թէ վերոյիշեալ յայտարարութիւնը անգամ մը եւս ցոյց կու տայ, որ տագնապի լուծման գծով Ազրպէյճանն ուղիղ ճանով է ոչ չ'ինչ մտնելու, ինչպէս նաեւ կ'ապագուէ, որ Լեւոնային Ղարաբաղի տարածքը ամբողջութեամբ իրեն կ'Ազրպէյճանի վերահսկողութեան տակ:

Ս. ԶԱՏԿՈՒԱՆ ՊԱՏԱՐԱԳ ԸՆԹԻԼԻԱՍԻ ՄԵՉ

Կիրակի, 23 Ապրիլ, Ս. Յարութեան տունին առիթով մատուցուի Սուրբ պատարագ պիտի մատուցուի Անթիլիասի Ս. Գրիգոր Լուսաւորիչ Մայր տաճարին մէջ:

Պիտի պատարագ եւ պիտի քարոզէ՝ **ԳԵՐՇ. Տ. ԱՐՏԱԻԱԶԴ ԼԱՐՔ. ԹՐԹՈՒԵԱՆ**

Պատարագի բառաձայն երգեցողութիւնը պիտի կատարուի «ՇՆՈՐ ԸՄԼԵ» երգչախումբին կողմէ: ղեկավարութեամբ ՀՈԳՇ. Տ. ՄԵՂՐԻԿ ՎՐԻ. ԲԱՐԻՔԵԱՆԻ:

Սկիզբ ժամերգութեան՝ Ժամը 8:00
Սկիզբ պատարագի՝ Ժամը 10:00
Քարոզ՝ Ժամը 11:00

Սիրով կը հրաւիրուի ժողովուրդը՝ ներկայ գտնուելու Սուրբ պատարագին եւ հոգեպէս վերանորոգուելու Սուրբ Յարութեան խորհուրդով:

ԴԻՒԱՆ ԿԱՌՈՂԻԿՈՍՏԱՐԱՆԻ

ԾԱՆՈՒՅՈՂՆԵՐՈՒ ՌԵՍԱՐՈՒԹԵԱՆ ԳՐԱԿԱՆ ՀԱՅ ԾԵՐԱՆՈՅ - ԿՈՒՐԱՆՈՅԻՆ ՄԵՉ

Շաբաթ, 22 Ապրիլ 2000, կէսօրէ ետք ժամը 4:00ին, ճրագալոյցի առիթով Ս. եւ անմահ պատարագ պիտի մատուցուի ՔԱՎԻ Հայ Ծերանոց - Կուրանոցին մէջ, որուն պիտի նախագահէ եւ իր պատգամը պիտի փոխանցէ

ԳԵՐՇ. Տ. ԳԵՂԱՄ ԵՊՍ. ԽԱՉԵՐԵԱՆ (Քարեան Առաջնորդ Լիբանանի Հայոց Թեմի)
Սիրով կը հրաւիրուի հաւատացեալ ժողովուրդը՝ հոգեպարար այս արարողութեան եւ լսելու սրբապատկար հօր պատգամը:

ՏՆՕՐԵՆՈՒԹԻՒՆ

ՀԱՅԿԱԿԱՆ ՊԱՏՈՒԻՐԱԿՈՒԹԵԱՆ ԵԼՈՅԹԸ ՄԱՐԴԿԱՅԻՆ ԻՐԱՒԱՆՅ ՅԱՆՁՆԱԽՈՒՄԻ ԺՈՂՈՎԻՆ ԸՆԹԱՅՔԻՆ

Ժընեհի մեջ շարունակուող ՍԱԿԻ Մարդկային Իրաւանց 3ամսանոցի 56րդ նստաշրջանի օրակարգի կարգ մը կետերուն վերաբերեալ ի շարք ալ պետութիւն-ներու, ելոյթ ունեցաւ նաեւ Հայաստանի պատուիրակու-թիւնը: Մասնաւորապէս ուշագրաւ էին ազգային փոքրա-մասնութիւններու հարցերուն քննարկումները:

Հայաստանի պատուիրակութիւնը իր ելոյթին ընթաց-քին ընդգծեց աշխարհի բազմաթիւ երկիրներուն մէջ տա-կալին դարասկիզբին բնակչութիւն հաստատած հայ հա-մայնքներու գոյութեան փաստը, ինչպէս նաեւ ներկայա-ցուց Հայաստանի փոքրամասնութիւններուն նկատմամբ կիրարկուող քաղաքականութիւնը:

Պատուիրակութիւնը նշեց Օսմանեան Կայսրութեան մէջ հայերու համոզեալ կատարուած Յեղասպանութեան իրողութիւնը. որուն հետեւանքով զոհուեցան 1,5 միլիոն հայեր. իսկ վերապրողները սփռուեցան ամբողջ աշխար-հի տարածքին վերածուելով տարբեր երկիրներու մէջ բնակող ազգային փոքրամասնութիւններու:

Հայաստանի պատուիրակութիւնը իր խօսքին մէջ ընդգծեց նաեւ, որ յաջորդ շաբաթ աշխարհի ամբողջ հայութիւնը, ինչպէս նաեւ Հայկական Յեղասպանութիւնը ճանջցած շարք մը պետութիւններ եւ կառավարութիւն-ներ պիտի գնէ Հայկական Յեղասպանութեան 85ամեա-կը:

ԸՍՏ ԵՒՐՈՍՈՐԿՈՒԹԻՐԳԻ ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱՐԱԳԻ ԿՈՂՄԻՏԵ

18 Ապրիլին Հայաստանի Ազգային Ժողովի արտա-քին յարաբերութիւններու յանձնախումբի փոխնախա-գահ եւ Հ.Յ. Դ. Հայաստանի Գերագոյն Մարմինի ներ-կայացուցիչ Արմէն Ռուստամեան յայտնեց, որ Եւրո-խորհուրդին՝ Հայաստանի անդամակցութեան համար առաջին անգամ արժեքային անդամներուն մէջ կ'ալ կ'էտ մը, որ որոշ վերապահութիւն յառաջացուցած է մասնա-ւորապէս Դաշնակցութեան մօտ:

Ըստ վերոյիշեալ կէտին, դարաբաղեան տագնապը լուծելու համար Հայաստան պէտք է կիրարկէ իր ազդե-ցութիւնը «Լեւոնային Ղարաբաղի հարցին վրայ»:

Արմէն Ռուստամեան ըսեալ, թէ Հայաստանը առա-ջարկեց հանել այդ կէտը, որովհետեւ անով կ'ը հաստատ-ւի, որ Ղարաբաղը հակամարտութեան երրորդ կողմ չէ: Եթէ Լեւոնային Ղարաբաղը կայացած պետութիւն է, ուստի Հայաստանի համար սխալ կ'ըլլայ այդ պետու-թեան մը համար պարտաւորութիւն վերցնելը:

Յայտնեալ, թէ Եւրոխորհուրդին անդամակցելու հա-մար Հայաստանին ներկայացած պայմաններէն մէկը կ'ը վերաբերի Լեւոնային Ղարաբաղի տագնապին, թէ եւ հայ պաշտօնատարները կ'ը պնդեն, թէ Լեւոնային Ղարաբաղի տագնապին անյուշ մնալու յախապայման չ'է Հայաստանի անդամակցութեան համար, այսուհանդերձ Լեւոնային Ղարաբաղի հարցով Եւրոխորհուրդի հիմնական պա-հանջ կ'ը մնայ այն, որ Հայաստանն ու Ազգայնաճակը պարտաւոր են ինչոյ լուծել խաղաղ միջոցներով:

Արմէն Ռուստամեան յայտնեց, թէ Եւրոխորհուրդի կեցուածքը փոխելու տակալին մասնակ կ'ալ, որովհե-տեւ Հայաստանի անդամակցութեան պայմաններուն վերջնական քննարկումը տեղի պիտի ունենայ 15 Մայի-սին, Տապիւի մէջ:

ՏԵԱՆՆ ՄԵՐՈՅ ՅԻՍՈՒՍԻ ԵՐԻՍՏՈՍԻ
ՀՐԱՇԱՓԱՌ ՅԱՐՈՒԹԵԱՆ ՏՕՆԸ
ՍՐԲՈՅ ՎԱՐԴԱՆԱՆՅ ԵԿԵՂԵՑԻՈՅ ՄԷՋ

Տեանն Մերոյ Յիսուսի Երիստոսի հրաշափառ Յարութեան տօնին առիթով, Կիրակի, 23 Ապրիլ 2000, Սրբոց Վարդանանց Եկեղեցոյ մէջ պիտի մատուցուի հանդիսաւոր Ս. պատարագ:

Պիտի պատարագէ եւ պիտի քարոզէ՝
ՀՈԳՇ. Տ. ՓԱՌԷՆ ՎՐԴ. ՎԱՐԴԱՆԵԱՆ

Սկիզբ ժամերգութեան՝ ժամը 7:30ից
 Սկիզբ Ս. Պատարագի՝ ժամը 9:30ից
 Քարոզ՝ ժամը 10:30ից

Սիրով կը հրաւիրուի հաւատացեալ ժողովուրդը
ԹԱՂԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ Ս. ՎԱՐԴԱՆԱՆՅ ԵԿԵՂԵՑԻՈՅ

Ս. ԶԱՏԻԿԸ Ս. ԱՍՏՈՒԱԾԱԾԻՆ ԵԿԵՂԵՑԻՈՅ ՄԷՋ

Կիրակի, 23 Ապրիլ, Ս. Յարութեան տօնին առի-թով, հանդիսաւոր Սուրբ եւ անմահ պատարագ պի-տի մատուցուի Նոր Ատանայի Ս. Աստուածածին Եկեղեցոյ մէջ:

Պիտի պատարագէ եւ պիտի քարոզէ՝
ԳԵՐՊ. Տ. ՆԱՐԵԿ Ծ. ՎՐԴ. ԱԼԵԿՍԵՐԶԵԱՆ

Սկիզբ ժամերգութեան՝ ժամը 7:30ից
 Սկիզբ պատարագի՝ ժամը 10:00ից
 Քարոզ՝ ժամը 11:30ից

Սիրով կը հրաւիրուի ժողովուրդը՝ ներկայ գտնու-ելու Սուրբ պատարագին եւ իրագոյնէ վերացնու-րողութեան Սուրբ Յարութեան իտրահուրդով:

ԹԱՂԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ Ս ԱՍՏՈՒԱԾԱԾԻՆ ԵԿԵՂԵՑԻՈՅ

Ս. ԶԱՏԻԿԸ Ս. ԱՍՏՈՒԱԾԱԾԻՆ ԵԿԵՂԵՑԻՈՅ ՄԷՋ

Կիրակի, 23 Ապրիլ, Ս. Յարութեան տօնին առի-թով, հանդիսաւոր Սուրբ եւ անմահ պատարագ պի-տի մատուցուի Նոր Ատանայի Ս. Աստուածածին Եկեղեցոյ մէջ:

Պիտի պատարագէ եւ պիտի քարոզէ՝
ԳԵՐՊ. Տ. ՆԱՐԵԿ Ծ. ՎՐԴ. ԱԼԵԿՍԵՐԶԵԱՆ

Սկիզբ ժամերգութեան՝ ժամը 7:30ից
 Սկիզբ պատարագի՝ ժամը 10:00ից
 Քարոզ՝ ժամը 11:30ից

Սիրով կը հրաւիրուի ժողովուրդը՝ ներկայ գտնու-ելու Սուրբ պատարագին եւ իրագոյնէ վերացնու-րողութեան Սուրբ Յարութեան իտրահուրդով:

ԹԱՂԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ Ս ԱՍՏՈՒԱԾԱԾԻՆ ԵԿԵՂԵՑԻՈՅ

«10րդ Նահանգ»-ը ԿԸ ԴԱԴՐԻ ԼՈՅՍ ՏԵՍՆԵԼԷ

15 Ապրիլին արցախ-եան «10րդ Նահանգ» թերթը յոյս ընծայեց իր վերջին՝ 22րդ թիւը: Թեր-թի այս թիւին «Կը հանդի-պին արեւածագին» խո-րագրեալ խմբագրակա-նին մէջ թերթի դադրեցու-մը կը նկատուի «ժամա-նակաւոր»:

Յայտնենք, որ թերթին դադրեցումը կու գայ 22 Մարտի մահափորձէն ետք տեղի ունեցած Ղա-րաբաղի ներքին քաղա-քական տագնապներէն եւ սահմանը թերթի լրա-գրող Վահրամ Աղաջան-եանի ձերբակալութենէն ետք:

Վերոյիշեալ խմբա-գրականին մէջ կ'ը ըսուի. «Յոգնած ենք ցաւէն, վի-րաւորանքէն, գրպարտու-թենէն, սեզ սխալ հասկը-նալէն, սեր խօսքի դիտա-ւորեալ խեղաթիրուէն եւ երկրիս բոլոր մեղքերը մեր վրայ բարդուելէն: Մենք ալ հրեշտակներ չ'ենք, սենք ալ սխալներ թող տուած ենք, բայց այդ սխալները երբեք միտում-նաւոր չ'են եղած»:

Թերթին խմբագրակա-նը կը շարունակէ, թէ թեր-թին մէջ վրիպակէն որոշ քաղաքական ուժեր որո-շակ սարքած են եւ անոր տակ թաքցուցած են ի-րենց տասնեակ սխալնե-րը:

Խմբագրականը կը յայտնէ, թէ թերթը ժամանակաւորապէս կը հեռանալ սաստիկ հրա-պարակէն. այսուհան-դերձ կը սնայ անոր հիմ-նադիր «Մտեփանակերտ Փլիւս» ընկերութիւնը, որ պիտի զբաղի հրատա-րակչական գործունէու-թեամբ: «10րդ Նահանգ»ը մտադիր է նաեւ ամիսը սէլ-երկու անգամ թերթի գովազդային լաւելուած հրատարակել:

ԳՐԱՒՈՒԱԾ ՕՐ

25 ԱՊՐԻԼ 2000
 ԱՐԵՎԱՆ ՏՈՒՂՈՒԹԻՒՆ
 ԿԱՆԱ

ՀՕԽԻ ԵՐՋԱՆԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆ

ԳՐԱՒՈՒԱԾ ՕՐ

8 ՄԱՅԻՍ 2000
 ԱԶԳԱՅԻՆ ՏՈՂՄԻԿ ՕՐ
 «ՌԻՎԻԵՐԱ» ՊԱՆԿՈՎ
 ՀՕԽԻ ԵՐՋԱՆԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆ

Կ'ՈՒՋՈՒԻ

● SEMERJIAN OPTIC կարիքը ունի օրինորդի մը: Ներկայանալ անձամբ:

ՎԱՐՉՈՒ ՅԱՐԿԱՐԱԾԻՆ

● Պուրե Համուտ, «Ար-մենիա» պողոտայ, «Պանք տը Սիրի է տիւ Լիլյան»ի դիմաց, յարմար դարձա-նատան կամ գրասենեա-կի, 3 սենեակ, մուտք եւ սպասման սենեակ: Հեռ. 01 - 267242:

ԱԿՆԱՐԿ ԸԱՅՐԵՆԻ ՄԱՍՈՒԼԷՆ

ՀԱԿԱԴԻՐ ԲԵԻԵՌՆԵՐԻ ՄԱՌՅԷ ԶՈՒԳՈՐԴՈՒԹԻՒՆՆԵՐԸ

«Շատ ցաւալի է, որ Լեւոնային Ղարաբաղի դեկաւար-ները, այդ թիւում նաեւ նախկին նախագահ Ռուպէրթ Քոչարեանը, կամ չհասկացան, կամ հասկանալով չա-հագործուած են ողջ հայ ժողովրդի կողմից իրենց նկատ-մամբ ցուցարբերած այն նրբանկատութիւնը, որ տարի-ներ շարունակ հայութիւնը՝ իր բոլոր կառույցներով, Ղարաբաղը ցոյց է տուել միայն հերոսական կողմով: Միեւնոյն ժամանակ, ցաւօք սրտի, մենք հրապարակ-ուին չենք ընդգծել նկատելի թերութիւնները, թէ պէտ-այդ բոլոր թերութիւններին մասին մենք ամենախիստ կերպով հարցադրումներ ենք կատարել անձնական հան-դիպումների ժամանակ՝ սկսած 1988ից: Սակայն, սգոր-ւելով այդ հանգամանքից, աւելի ամրացնելով իրենց դիրքերը, այդ թիւում նաեւ 1998ի համահայկական նա-խագահական արտահերթ ընտրութիւններում, այդ դե-կաւարները թոյլ են տալիս բաւականին լուրջ կամայա-կանութիւններ, որոնք ստուեր են ցցում դարաբաղեան ազատամարտի, դարաբաղեան հարցի միջազգային քրն-արկման վրայ», ասում է ՍԻՄԻ նախագահ, Ազգային Ժողովի պատգամաւոր Հրանդ Խաչատրեանը:

Լրացող Վահրամ Աղաջանեանի հանդէպ վերջին տա-րիներին ընթացումը ցուցարբերած պետական մտեցումը ոչ այնքան նրա՝ որպէս մարդու, անձնական ողբերգու-թիւն է, որքան հայրենական կառույցների ողբերգու-թիւնը: Չցուցարբերելով ձկուռ եւ գրագէտի գործունէու-թեան եւ ոչ մի նշոյլ, համապատասխան մարմինները ունակ են լուր կատարել մեղադրանքով պատասխանա-տուութեան կանչել թղթակցի, այն ժամանակ, երբ քրէա-կան յանցանքների համար յատկա մեղադրուող մէկը ըմբռնուած է իր ազատութիւնը: Կառույցներ, որոնք կարող են շարաթ աւ շարաթ, ամիս առ ամիս յետաձգել քրէական եւ նոյնիսկ պետական յանցագործութիւննե-րին վերաբերող դատավարութիւնը, սակայն մէկ-երկու ժամերի ընթացքում վճիռ կայացնել լրագրողի ազա-տարկման մասին:

Ցանկութիւն չունեմ այս հարթութեան վրայ յատկա-պէս Վահրամ Աղաջանեանին դիտարկել որպէս առանց-քային կերպար, քանզի գիտակցութիւնս այն է, որ նրա ձերբակալման փաստը առաւել խոսում է այն խոր հա-կատութիւնների սօտին, որոնք առկայ են մեր իշխանա-կան համակարգում եւ առիթ են փնտուռում նոր բուր-նակումների համար:

Ընթացիկ պահի տրամաբանութիւնը հակասութիւն է. փաստօրէն մեզանում, միմեանցից անկախ, գոյացել է իրեամբ ռեժիմի մարտավարական գործակցութիւն, որոնք ներկայացուցիչներն այսօր հանդէս են գալիս

գրեթէ միեւնոյն մեղադրանքներով: Եւ եթէ առաջին դէպքում սա կարող է ընկալուել որպէս սովորական փոխ վրէժ, ապա երկրորդ դէպքում...

Նստում է «Ղարաբաղ» կոմիտէի անդամ, ակադեմի-կոս Ռաֆայէլ Ղարաբաղեանը. «Մի բանում ես խորապէս համոզուած եմ. եթէ ինչ-որ մի իրադրութիւն ուրա-խացնում է թշնամուն, ուրեմն սխալ է: Իսկ այսօր թըշ-նամին ուրախանում է, ուրախանում է այն գոյութու-ցից, որ սկսուել է այնտեղ Ղարաբաղում, ուրախանում է այն գոյութուցից, որը Հայաստանում է, ուրախանում է մեր այս հայաթափութիւնից, հասկանալով արտա-գագաթից... Ուրեմն սխալ ենք վարում, սխալ ենք գոր-ծում: Ինձ, անշուշտ, գայրացնում է նաեւ լրագրողի վերաբերեալ այս վերջին մտեցումը: Սա մեզ անմիջա-պէս հանում է ժողովրդավարական, գոնէ յաւակնու-թիւն ունեցող, երկրների շարքից:

Ուրեմն պէտք է խնդիր գան այնտեղի այդ եռանդուն գործիչները եւ հասկանան, որ կայ միջազգային կար-ծիք»:

Կ'ուզեմ կրկին եւ յատուկ կերպով ընդգծել, որ Հա-յաստանում ստեղծուած է մի այնպիսի անհեթեթ իրա-վիճակ, երբ նախկինում միմեանց, եթէ ոչ ատող, ապա գոնէ չընդունող ուժերը ներկայումս հանդէս են գալիս նման յայտարարութիւններով եւ այս փաստը չի կարող չընդունել քաղաքական շահարկումների առարկայ: Իրաւ. ո՞վ կարող էր մտածել, որ նոյն Հրանդ Խաչա-տրեանը այսօր նշելու է. «Մենք ականատեա ենք մի շարք փաստերի եւ այդ փաստերի մասին վստահ կարող ենք խօսել... Հիմքեր ունենք մեկնարկանելու, որ Ռուպէրթ Քոչարեանի գործողութիւնները վնաս են բերում դա-րաբաղեան հարցի լուծմանը՝ յօգուտ վերամիաւորուած երկրի կամ անկախ Ղարաբաղի տարբերակների: Ակրն-յայտօրէն այդ քայլերը վնասում են»:

Ստացուել է այնպէս, որ ժամանակը միշտ աշխա-տում է այն ուժի սօտին, որին տապալելուց յետոյ իշ-խանութեան կեանք նոր ուժեր չի հարթեցնում առաջինիս օրօք գոյացած հակասութիւնները եւ նոյնիսկ խորաց-րում է դրանք: Այսպէս եղաւ կարէն Դեմիրճեանի պա-թեպայում, եւ այս առումով թէ՛ Հրանդ Խաչատրեանի, թէ՛ Ռաֆայէլ Ղարաբաղեանի եւ թէ՛ ապագայում չըրացաւ-ւող այլոց մեկնարանութիւնները չեն կարող մտահոգ իչ չլինել: Սակայն մի թէ՛ նորից մեղաւորը ժամանակն է...

ԱՐԻՍ ՂԱԶԻՆԵԱՆ
 «Երկիր»

ՀՐԱՇԱՓԱՌ Ս. ՅԱՐՈՒԹԵԱՆ ՏՕՆԻՆ ԱՌԻԹՈՎ ԸՆԼԻԿՍԱԿՈՐ Ս. ՊԱՏԱՐԱԳ ՍՐԲՈՅ ԸԱՌԱՍՆԻԳ ՄԱՆԿԱՆՅ ԵԿԵՂԵՑԻՈՅ ՄԷՋ

Կիրակի, 23 Ապրիլ 2000, Սուրբ Չատուրան տօնին առիթով պիտի պատարագէ եւ յաւուր պատշաճի պիտի քարոզէ՝

ԳԵՐՇ. Տ. ՎԱՐԴԱՆ ԱՐԵՇՄ. ՏԵՄԻՐՃԵԱՆ

Երգեցողութիւնը պիտի կատարուի Եկեղեցոյ Ղարաջ ղոսի՝ «ՆԱՐԿԱՅԻ» երգախումբին կողմէ, ԵԿՄԱԼԵԱՆ քառաձայն եղանակով, խմբավարութեամբ պրն. ԳԸՈՐԳ ՊԵՊԵՃԵԱՆԻ:

Սկիզբ ժամերգութեան՝ ժամը 7:00ից
 Ս. պատարագ՝ ժամը 9:00ից
 Քարոզ՝ ժամը 10:00ից

Սիրով կը հրաւիրենք հաւատացեալ ժողովուրդը՝ ներկայ գտնուելու եւ հաղորդուելու սոյն հոգեպարար արարողութեան:

ՍՐԲՈՅ ԸԱՌԱՍՆԻԳ ՄԱՆԿԱՆՅ ԵԿԵՂԵՑԻՈՅ ԹԵՂԵԿԱՆՈՒԹԻՒՆ

ԱՊՐԻԼԵԱՆ ՆԱՀԱՏԱԿԱՅ ՈԳԵԿՈՉՈՒՍ ՈՒ ԱՆԹԻԼԻԱՍԻ ՄԷՋ

Երկուշաբթի, 24 Ապրիլին, Անթիլիասի Ս. Գրի-գոր Լուսաւորիչ Մալո տաճարին մէջ արժանի վա-նելութեամբ պիտի ոգեկոչուի անմահ յիշատակը Մեծ Եղեռնի մեկուկէս միլիոն նահատակներուն:

Պիտի պատարագէ եւ պիտի քարոզէ՝
ԳԵՐՇ. Տ. ՎԱՐԴԱՆ ԱՐԵՇ. ՏԵՄԻՐՃԵԱՆ

Պատարագէ անմիջապէս ետք, նահատակաց Յուշարձան - Մատուռին առջեւ տեղի պիտի ունե-նայ հոգեմեկուկուտեան արարողութիւն, որուն ըն-թացքին պիտի կարգացուի Ն. Ս. Օ. Տ. Տ. ԱՐԱՄ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍԻ պատգամը:

Սիրով կը հրաւիրուի մեր ժողովուրդի գաւակ-ները, ներկայ գտնուելու Եկեղեցական արարողու-թեանց եւ կրօնական ու ազգային նախանձախընդ-րութեամբ արժանի յարգանք ընծայելու մեր ան-մահ նահատակներուն:

ԿԻԻԱՆ ԿԱԹՈՂԻԿՈՍԱՐԱՆԻ
